



Մարդու իրավունքների քաղաքականություն



- ✓ Կոկա-Կոլա ՋԲԲ Ընկերության և համայնքների կայուն զարգացման հիմնարար մասը կազմում են մարդու իրավունքները: Մեր Ընկերությունում մենք պատասխանատու ենք աշխատողներին ապահովել արժանապատիվ և հարգալից վերաբերմունքով:
- ✓ Կոկա-Կոլա ՋԲԲ Ընկերության Մարդու իրավունքների քաղաքականությունն համահունչ է միջազգայնորեն ընդունված մարդու իրավունքների սկզբունքներին, որոնք ընդգրկված են Մարդու իրավունքների Համընդհանուր հռչակագրում, հիմնարար սկզբունքների և աշխատանքային իրավունքների վերաբերյալ Միջազգային աշխատանքային կազմակերպությունների հռչակագրում, բիզնեսի և մարդու իրավունքների մասին ՄԱԿ-ի առաջնորդող սկզբունքների և ՄԱԿ-ի ընդհանուր սկզբունքների մեջ:
- ✓ Մարդու իրավունքների քաղաքականությունը կիրառվում է Կոկա-Կոլա ՋԲԲ Ընկերության կողմից, այն տնտեսվարող սուբյեկտների կողմից որտեղ ամենաշատ բաժնեմասեր է տիրապետում, և իր կողմից կառավարվող կառույցների կողմից: Ընկերությունը պատասխանատու է պահպանել այս քաղաքականության սկզբունքները: Մեր Մատակարարման առաջնորդող սկզբունքները տարածվում են մեր մատակարարների վրա և համաձայնեցված են այս քաղաքականության սկսնակալիքների և պարտավորությունների հետ:

Հարգանք մարդու իրավունքների նկատմամբ



Կոկա-Կոլա ՋԲԲ Ընկերությունը հարգում է մարդու իրավունքները: Մենք պատասխանատու ենք մարդու իրավունքների արժանապատիվ և համապատասխան կանխարգելիչ գործընթացների շնորհիվ բացահայտել և կանխել մարդու իրավունքների վրա ցանկացած բացասական ազդեցություն, որն առնչվում է մեր բիզնես գործունեության հետ:

Համայնք և շահառու համագործակցություն



Մենք գիտակցում ենք մեր ազդեցության մասին այն համայնքներում, որտեղ գործում ենք: Մենք պատասխանատու ենք համագործակցելու շահառուների հետ մեր գործունեության համայնքներում՝ երաշխավորելու համար, որ մենք մեր բիզնեսը վարելու ընթացքում լսում, սովորում և հաշվի ենք առնում նրանց տեսակետները:

Անհրաժեշտության դեպքում, մենք պատրաստակամ ենք մեր բիզնեսին առնչվող մարդու իրավունքների խնդիրների մասին երկխոսություն ունենալ շահառուների հետ: Մենք հավատում ենք, որ տեղական խնդիրներն առավելապես լուծվում են տեղական մակարդակով: Մենք նաև պատրաստակամ ենք ստեղծել տնտեսական հնարավորություն և խթանել բարի կամքը այն համայնքներում, որտեղ մենք գործում ենք համապատասխան տեղական նախաձեռնությունների:



Բազմազանության արժևորում



Մենք արժևորում ենք մեր մարդկանց բազմազանությունն ու նրանց կատարած ներդրումները: Մենք հավասար հնարավորություններ տրամադրելու երկարատև պարտավորություն ունենք և չենք ընդունում խտրականություն և ոտնձգություն: Մենք նվիրված պահպանում ենք այնպիսի աշխատավայր, որը գերծ է խտրականությունից և ոտնձգություններից հիմնված ռասայական, սեռական, մաշկի գույնի, էթնիկ կամ ազգային ու սոցիալական պատկանելիության, կրոնական, տարիքային, սահմանափակ կարողություններով անձանց, սեռական ուղղվածության, քաղաքական համոզմունքի կամ գործող օրենքով պաշտպանված այլ կարգավիճակներից:

Ընկերությունում հավաքագրման, աշխատանքի ընդունման, տեղավորման, ուսուցման, փոխհատուցման և առաջընթացի հիմքն է հանդիսանում որակավորումը, մասնագիտական հմտությունները և փորձը:

Անկախ անձին բնորոշ անհատական հատկություններից կամ կարգավիճակից, Ընկերությունը չի հանդուրժում անհարգալից վերաբերմունք կամ ոչ պատշաճ վարք, անարդար վերաբերմունք կամ ցանկացած տեսակի վրեժ: Բռնությունը աշխատավայրում և աշխատավայրից դուրս աշխատանքին առնչվող ցանկացած հանգամանքում անընդունելի է: Այս սկզբունքները կիրառվում են ոչ միայն Ընկերության աշխատողների նկատմամբ, այլ նաև բիզնես գործընկերների նկատմամբ, որոնց հետ մենք աշխատում ենք:

Արհեստակցական միությունների և կոլեկտիվ բանակցությունների միանալու ազատություն



Մենք հարգում ենք աշխատողների արհեստակցական միության միանալու, միություն կազմելու կամ չմիանալու իրավունքը առանց հետապնդման, ահաբեկման կամ ոտնձգության վախի:

Մենք պատրաստ ենք աշխատողներին ներկայացնող իրավաբանորեն ճանաչված արհեստակցական միության կողմից ազատ կամքով ընտրված ներկայացուցիչների հետ վարել կառուցողական երկխոսություն: Մենք պատրաստ ենք բարեխղճորեն բանակցել այդ ներկայացուցիչների հետ:



Անվտանգ և առողջ աշխատավայր



Մենք ապահովում ենք անվտանգ և առողջ աշխատավայր կիրառվող անվտանգության և առողջության օրենքներին, կանոնակարգերին և ներքին պահանջներին համապատասխան: Մենք պատասխանատու ենք պահպանելու արդյունավետ աշխատավայր՝ նվազեցնելով պատահարների, վնասվածքների և առողջապահական վտանգների ենթարկվելու հավանականությունը: Մենք պատասխանատու ենք զարգացնել մեր աշխատողներին՝ շարունակաբար բարելավել աշխատանքային առողջ և անվտանգ միջավայրն, այդ թվում վտանգների բացահայտում և առողջության և անվտանգության հարցերի վերացում:

Աշխատավայրի անվտանգություն



Մենք մեզ պատասխանատու ենք համարում պահպանելու այնպիսի աշխատավայր, որը զերծ կլինի բռնությունից, ոտնձգությունից, ահաբեկումից և այլ վտանգավոր կամ կարգազանց պայմաններից, ներքին և արտաքին սպառնալիքների հետ պայմանավորված:

Աշխատողների անվտանգության համար ապահովում ենք անվտանգության երաշխիքներ, որոնք անհրաժեշտության դեպքում հետևողականորեն պահպանվում են աշխատողների անձեռնմխելիության ու արժանապատվությանը համաձայն:

Պարտադրված աշխատանք և մարդկային թրաֆիքինգ



Մենք արգելում ենք հարկադիր աշխատանքը իր բոլոր դրսևորումներով՝ այդ թվում բանտային աշխատանք, հարկադրված աշխատանք, պարտքի դիմաց աշխատանք, ստրկական աշխատանք, ռազմական աշխատուժ և ցանկացած այլ աշխատանք, որը հանդիսանում է մարդկային թրաֆիքինգի տեսակ:



Երեխաների աշխատանք



Արգելում ենք 18 տարին չլրացած անձանց աշխատանքի ընդունելը այն պաշտոններում, որտեղ պահանջվում է կատարել վտանգավոր աշխատանք:

Աշխատանքային ժամեր, աշխատավարձ և նպաստներ



Մենք վարձատրում ենք անձնակազմին աշխատանքային շուկայի և արդյունաբերության ոլորտի հետ մրցակցային հարաբերակցությամբ: Մենք գործում ենք աշխատանքային ժամերի, աշխատավարձի, արտաժամերի և նպաստների մասին գործող օրենքներին լիովին համապատասխան:

Ուղեցույց և հաշվետվություն աշխատողների համար



Մենք հանձն ենք առել ստեղծելու աշխատավայր, որտեղ աշխատողների միջև բաց և ազնիվ հաղորդակցությունները արժեքավորվում և հարգվում են: Մեր քաղաքականությունն է՝ հետևել բոլոր կիրառվող աշխատանքային և զբաղվածության օրենքներին, այն երկրներում որտեղ մեր ընկերությունը գործունեություն է ծավալում:

Եթե Դուք կարծում եք, որ հակասություններ են առկա քաղաքականության տառի և օրենքների, Ձեր աշխատավայրի սովորույթների և պրակտիկայի միջև, եթե Դուք հարցեր ունեք այս քաղաքականության վերաբերյալ կամ կցանկանաք զեկուցել սույն քաղաքականության հնարավոր խախտման մասին, ապա պետք է այդ հարցերն ու մտահոգությունները բարձրացնեք համաձայն գործող գործընթացների, որտեղ գործադրվել է բոլոր ջանքերը գաղտնիությունը ապահովելու համար: Դուք կարող եք հարցեր տալ կամ զեկուցել հնարավոր խախտման մասին Ձեր տեղական ղեկավարությանը, Կադրերի բաժնին, Իրավաբանական բաժնին: Կոկա-Կոլա ՅԲԸ ընկերությունն հանձն է առել ուսումնասիրել, հասցեագրել և պատասխանել աշխատողների մտահոգություններին և ի պատասխան ցանկացած խախտման կիրառել համապատասխան ուղղիչ գործողություններ: